

## ԳՈՐԾԱԴԻՐ

### ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳՐԱՆՅՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՐԿՆԻՆ ԱՃՆ ԱՆՆԱԽԱԴԵՂ Ե ԱՄԲՈՂՋ ԵՎՐՈՂԱՅՈՒՄ»

Վրաստանի վարչապետ Իրակլի Գարիբաշվիլին նախագահությամբ անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:



Նիստի մեկնարկին Իրակլի Գարիբաշվիլին հանրագումարեց անցած 9 ամիսների տնտեսական արդյունքները՝ նշելով, որ Վրաստանի տնտեսությունը 2022 թվականի ինն ամսվա ընթացքում աճել է 10,2 տոկոսով, ինչն աննախադեպ ցուցանիշ է ողջ Եվրոպայում:

- Ինչպես ձեզ հայտնի է, ընթացիկ աշխարհաքաղաքական մարտահրավերների ու լարվածության ֆոնին մենք պահպանում ենք բարձր տնտեսական աճ: Ինն ամսվա ընթացքում Վրաստանում

գրանցվել է 10,2 տոկոս տնտեսական աճ: Դա աննախադեպ է ողջ Եվրոպայում,- հայտարարեց Իրակլի Գարիբաշվիլին ու հավելեց, որ երկրի արտահանումն աճել է 40 տոկոսով՝ ինն ամսվա ընթացքում (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ԷԿՈՆՈՄԻԿԱ

### ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՐՑԵՐԸ



Ընդգծվել է երկնիշ տնտեսական աճի դրական ազդեցությունը երկրի տնտեսության զարգացման վրա: Նշվել է, որ բարձր տնտեսական աճի պահպանումը Վրաստանի կառավարության առաջնահերթությունն է, եւ բոլոր համապատասխան գե-

Վրաստանի վարչապետ Իրակլի Գարիբաշվիլու գլխավորությամբ անցկացված Տնտեսական խորհրդի նիստում խորհրդի անդամները քննարկեցին տնտեսական առումով երկրում առկա դրական միտումները:

րատեսչություններն ակտիվ աշխատում են այդ ուղղությամբ: Զանդիպմանը քննարկվել են նաեւ էներգետիկ անվտանգության ուղղությամբ եվրոպական եւ ասիական երկրների հետ համագործակցության, երկրում ընթացիկ եւ նախատեսվող էներգետիկ նախագծերը: Անդրադարձ է կատարվել նաեւ 2023 թվականի բյուջեի հիմնական ուղղություններին: Վարչապետը նշել է, որ 2022 թվականին ձեռք բերված երկնիշ տնտեսական աճը կառավարությանը թույլ է տվել բազմաթիվ ուղղություններով ավելացնել ֆինանսավորումն ու կրճատել բյուջեի պակասորդը եւ պետական պարտքը:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

### ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ՝ ԱՐԱՔԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Վրաստանի վարչապետ Իրակլի Գարիբաշվիլին երկրորդ աշխատանքային այցով գտնվում էր Արաբական Միացյալ Եմիրություններում:

Աբու Դաբիի միջազգային օդանավակայանում վարչապետի դիմավորման արարողությունից հետո, կայացավ Իրակլի Գարիբաշվիլու հանդիպումը Արաբական

Միացյալ Եմիրությունների նախագահ շեյխ Մոհամեդ բեն Ջալեդ Ալ-Նահիանի հետ:

Զանդիպմանը քննարկվեցին տարբեր ոլորտներում երկու երկր-

ների արդյունավետ համագործակցության հիմնական ուղղությունները: Ընդգծվեց երկրների միջեւ քաղաքական երկխոսության բարձր մակարդակը, ինչի մասին են վկայում վերջին տարիներին բարձր մակարդակի այցերը: Կողմերը պատրաստակամ (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԵՎ «ՀԱՎԱԿՈՒՊՅՈՒՆ ԲՅՈՒՐՈՅԻ» ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ



Վրաստանի խորհրդարանը՝ 82 կողմ ձայնով, առաջին ընթերցմամբ հավանություն տվեց երկրի կառավարության ներկայացրած «Ազգային անվտանգության քաղաքականության պլանավորման եւ համակարգման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծին:

Օրինագծի համաձայն, Պետական պաշտպանության հատուկ ծառայության պետը դառնալու է Ազգային անվ-

տանգության խորհրդի մշտական անդամ: Վրաստանի խորհրդարանը Եվրահանձնաժողովին (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

## ԵՆԱԿՈՂՄ ԶԱՆԳԻՊՈՒՄ ՍՈՉԻՈՒՄ

### ԸՆԴՈՒՆՎԵՑ ԶԱՄԱՏԵՂ ԶԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 31-ին Սոչիում Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի նախաձեռնությամբ անցկացվեց եռակողմ հանդիպում Գայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի ղեկավարների մասնակցությամբ:



Եռակողմ հանդիպմանը նախորդել էին Ռուսաստանի նախագահի առանձին հանդիպումները Գայաստանի վարչապետի եւ Ադրբեջանի նախագահի հետ: Վլադիմիր Պուտինը, Սիկլո Փաշինյանն ու Իլհամ Ալիևը քն-

նակեցին 2020 թվականի նոյեմբերի 9-ի, հունվարի 11-ի եւ 2021 թվականի նոյեմբերի 26-ի եռակողմ հայտարարությունների իրականացման գործընթացը: Կողմերը հաստատեցին իրենց (Շարունակությունը՝ 7-րդ էջում)

## ԶԱՅԱՍՏԱՆ

### ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՆՅՎԱՅՎԵՑ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՆԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ԳԱԳԱՔԱԺՈՂՈՎԸ

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹՎՈՒՄ ԷԻՆ ՆԱԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԶԱՅ ԶԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎՈՐԱԿՆԵՐԸ



յանը, Սփյուռքի գործերի գլխավոր համձնակատար Զարեհ Սիմանյանը, ինչպես նաեւ Սփյուռքի համայնքային կառույցների եւ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հոկտեմբերի 28-31-ը երեւանում անցկացվեց Առաջին համաշխարհային համահայկական գագաթաժողովը, որի բացման արարողությանը ներկա էին եւ ելույթ ունեցան Գայաստանի վարչապետ Սիկլո Փաշինյանը, Արցախի նախագահ Արայիկ Գարությունյանը, Գայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, Սփյուռքի գործերի գլխավոր համձնակատար Զարեհ Սիմանյանը, ինչպես նաեւ Սփյուռքի համայնքային կառույցների եւ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Առաջին գագաթաժողովը որպես նոր ձեւաչափ եւ դիմամիկ հարթակ, կծառայի Սփյուռքի ներկայացուցիչների եւ տեղի գործընկերների միջեւ՝ քննարկելու համընդհանուր նշանակության մարտահրավերների ու խնդիրների քննարկմանը: Օրակարգում ընդգրկվել են ազգային անվտանգությանը, հայ-

կական շահերի պաշտպանությանը, հայրենիքի ռազմավարական ոլորտների զարգացմանը, հայրենադարձությանը, ներդրումային ներգրավվածությանը, հայապահպանությանն ու Սփյուռքի ինքնակազմակերպմանը վերաբերող հարցեր:

## ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

### ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՆԱԿ ԴԵՄՊԱՆԻ ՀԱՆԱԳՈՂԱԿԱՆ ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐԸ

Վրաստանում Գայաստանի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը շարունակում է ճանաչողական հանդիպումները Վրաստանի գործադիր եւ օրենսդիր իշխանությունների, կրթական, մշակութային, գիտական ոլորտների ներկայացուցիչների հետ:



Մասնավորապես, Վրաստանում Գայաստանի նորանշանակ դեսպանը հանդիպումներ ունեցավ Վրաստանի բնապահպանության եւ գյուղատնտեսու-

թյան նախարար Օթար Շամուգիայի, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳՐԱՆՅՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՐԿՆԻՇ ԱՃՆ ԱՆՆԱԽԱԴԵՊ Է ԱՄԲՈՂՋ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

քում՝ կազմելով 37,4 տոկոս: Իսկ արտահանումից եկամուտները կազմել են 4 միլիարդ դոլար:

- Ձբոսաշրջությունը վերականգնվում է արագ տեմպերով: Եթե մենք համեմատենք 2019 թվականի հետ, ապա այս տարի զբոսաշրջությունը վերականգնվել է 97,5 տոկոսով: Դրանից եկամուտները կազմել են 2,5 մլրդ ԱՄՆ դոլար,- ասաց վարչապետը:

Վրաստանի կառավարության ղեկավարի խոսքով, նման բարձր տնտեսական աճը կպահպանվի մինչև տարեվերջ, եւ տարեվերջին սպասվում է երկնիշ տնտեսական աճ:

Ընթացիկ տարվա առաջին երեք եռամսյակում տնտեսական երկնիշ աճի մասին են վկայում նաեւ Վրաստանի Ազգային բանկի եւ Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալները:

Մասնավորապես, Ազգային բանկի հաշվետվության համաձայն, Վրաստանում տնտեսական ակտիվությունը շարունակում է մնալ բարձր:

«Ռուս-ուկրաինական պատերազմի եւ դրան ուղեկցող պատժամիջոցների հետեւանքով, զգալի ավելացավ միգրացիոն հոսքը դեպի Վրաստան, ինչը խթանեց համատեղ պահանջարկը: Միջին տարեկան տնտեսական աճն այս տարվա առաջին ութ ամիսներին կազմել է 10,3 տոկոս»,- ասված է Ազգային բանկի տարածած հաղորդագրության մեջ:

Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության (Geostat) նախնական տվյալների համաձայն, 2022 թվականի սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, իրական համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) աճել է 8,8 տոկոսով:



ԱՄՆ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-ԻՆ՝ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոյեմբերի 8-ին Ամերիկայի Միացյալ Նահանգներում կանցկացվեն միջանկյալ ընտրություններ:

Միջանկյալ ընտրությունների արդյունքներով կնորացվի ամբողջ Ներկայացուցչների պալատը եւ Սենատի մեկ երրորդը, կընտրվեն մի շարք նահանգների ղեկավարներ:

ԵՎՐԱՄՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱԾԻ ՆՈՐ ՌԵԿՈՐԴ ԵՎՐԱԳՈՏՈՒՄ

Յոկտեմբերին Եվրոյի գոտում գնաճը սահմանել է հերթական ռեկորդը՝ տարեկան հաշվարկով 10,7 տոկոս:

Եվրոյային վիճակագրական գործակալության՝ Եվրոստատի տվյալներով, Եվրոյի գոտում գնաճը մարտ ամսից մշտապես մեծանում է: Նախորդ վերջին ռեկորդը սահմանվել է սեպտեմբերին՝ 9,9 տոկոսի մակարդակում:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՎԵՐԱԴԱՐՉ՝ ՌԻԿՐԱԻՆԱԿԱՆ ՀԱՅԱՅԱՏԻԿԻ ԳՈՐԾԱՐՔԻՆ

Ռուսաստանը վերադառնում է հացահատիկային գործարքին՝ Ուկրաինայից ստանալով գրավոր երաշխիքներ Մոսկվայի դեմ մարտական գործողություններ վարելու համար հացահատիկային միջանցքը չօգտագործելու մասին: Դա տեղի է ունեցել ՄԱԿ-ի եւ Թուրքիայի միջնորդության շնորհիվ:

ԼԵՀԱՍՏԱՆ

ԱՐԳԵԼԱՓՎԱԳՆՆԵՐ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՍԱՀՄԱՆԻՆ

Լեհաստանն սկսել է արգելափակոցներ կառուցել Ռուսաստանի Կալինինգրադի մարզի հետ սահմանին: Այդ մասին լրագրողներին հայտարարել է Լեհաստանի փոխվարչապետ, ազգային պաշտպանության նախարար Մարիուշ Բլաշչակը:

ԲՐԱԶԻԼԻԱ

ՂԱ ՄԻԼՎԱՆ՝ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՅ

Յոկտեմբերի 30-ին Բրազիլիայում կայացել է ընդհանուր նախագահի եւ 12 նահանգապետերի ընտրությունների երկրորդ փուլը: Ընտրության արդյունքներով, Աշխատավորների կուսակցության թեկնածու Լուիս Ինասիու դա Սիլվային պաշտպանել է ընտրողների 50,37 տոկոսը, մինչդեռ նրա պահպանողական մրցակից Ժայիր Բոլսոնարուն՝ 49,13 տոկոսը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ՝ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մություն հայտնեցին է՛լ ավելի խորացնելու համար: Ընդգծվեց զբոսաշրջության, էներգետիկայի եւ տրանսպորտի ոլորտում առկա մեծ ներուժի լիարժեք օգտագործման կարելիությունը: Նշվեց, որ երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը 2022 թվականի ինն ամիսների ընթացքում աճել է 84 տոկոսով եւ կազմել 190 մլն դոլար:

Այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ նաեւ Արաբական Միացյալ Էմիրությունների հանդուրժողականության եւ համակեցության նախարար շեյխ Նահյան Մուբարաք Ալ-Նահիանի հետ: Նշենք, որ շեյխ Նահյան Մուբարաք Ալ-Նահիանը Վրաստանում խոշորագույն ներդրումներից մեկի սեփականատերն է: Նա 150 միլիոն դոլարի ներդրում է կատարել Վրաստանում: Հանդիպմանը քննարկվե-

ցին նաեւ երկու երկրների միջև առկա համագործակցության հիմնական ուղղություններն ու ապագա համագործակցության խորացման հեռանկարները:



Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ նաեւ Արաբական Միացյալ Էմիրությունների հանդուրժողականության եւ համակեցության նախարար շեյխ Նահյան Մուբարաք Ալ-Նահիանի հետ: Նշենք, որ շեյխ Նահյան Մուբարաք Ալ-Նահիանը Վրաստանում խոշորագույն ներդրումներից մեկի սեփականատերն է: Նա 150 միլիոն դոլարի ներդրում է կատարել Վրաստանում: Հանդիպմանը քննարկվե-

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ



ԻՐԱԿԼԻ ԿՈՒՐԱՄԻՇԵ. «ԹՈՒՅԼ ԶԵՆՔ ՏԱ ՈՏՆՉԳՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ»

«Վրացական երազանք» իշխող կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեի կարծիքով, «Մթավարի արխիվ» գլխավոր տնօրեն Նիկա Գվարամիայի մասին ԱՄՆ դեսպանատան տարածած հայտարարությունը ոտնձգություն է դատարանի անկախության նկատմամբ:

- Մենք ոչ մի դեպքում չենք ներում դատարանի անկախության նկատմամբ միջամտությունը կամ ազդեցությունը դատարանի որոշումներին:

րի վրա: ԱՄՆ դեսպանի հայտարարությունը, դա ուղղակի ոտնձգություն էր դատական իշխանության անկախության նկատմամբ,- ասաց Իրակլի Կոբախիձեն:

ԱՄՆ դեսպանատան հայտարարությամբ, «Մթավարի արխիվ» հեռուստաընկերության գլխավոր տնօրեն Նիկա Գվարամիայի ազատագրման որոշումը վտանգի տակ է դնում երկրի եվրոպական ապագան:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՄՊԱՆԻ ԾԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ծառայության ղեկավար Լեւան Կակավալաժի, Վրաստանի արտաքին գործերի նախարարության Լեւան Միքելաձեի անվան դիվանագետների պատրաստման եւ հետազոտական ինստիտուտի տնօրեն Իրինա Դախուրադիձեի հետ:

Հանդիպմանը քննարկվել են գյուղատնտեսության ուղղությամբ ապագա համա-

գործակցության հարցեր: Օթար Շամուգիան նշել է, որ երկու երկրների միջև գյուղատնտեսության ուղղությամբ համագործակցության հուշագրի մշակումը շարունակվում է, ինչը կնպաստի կոնկրետ հարցերի համատեղ քննարկմանն ու որոշումների կայացմանը:

Հայաստանի դեսպանի եւ Վրաստանի եկամուտների ծառայության ղեկավարի հանդիպմանը խոսվեց Վրաստանի եւ

Հայաստանի մաքսային մարմինների միջև սերտ համագործակցության հարցի մասին: Կողմերը կարեւորեցին դրա առավել խորացման ուղղությամբ հետեւողական աշխատանքների իրականացումը:

Անդրադարձ կատարվեց Վրաստանի տարածքով իրականացվող բեռնափոխադրումների ընթացքում առաջացող հարցերին եւ դրանց ուղղությամբ կատարվող աշխատանքներին:

ՌՈՒՄ - ՌԻԿՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ. 254-ՐԴ ՕՐ

ՎԱՊԻՄԻՐ ԶԵԼԵՆՍԿԻ. «ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԶԻ ՆԿԱԾԻ ՌԻԿՐԱԻՆԱՆ Ո՛Չ ԻՐ ԲԱՆԱԿՈՎ ԵՎ Ո՛Չ ԷԼ ԻՐ ՏԱՐԱԾՔՈՎ»

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկու հայտարարությամբ, երկրի ղեկավարությունը հնարավոր ամեն ինչ անում է ռուսական զինուժի կողմից ավերված ջրամատակարարման եւ էներգետիկ համակարգերի վերականգնման, բնակչությանը ջրով եւ էլեկտրաէներգիայով ապահովման համար: Միաժամանակ, Ուկրաինայի նախագահը նշեց, որ միջոցներ են ձեռնարկվում հակաօդային պաշտպանության ուժեղացման համար:

- Ռուս ահաբեկիչները չունեն այնպիսի հրթիռներ, որոնք կարող են վնասել Ուկրաինայի կենսունակությանը, քաղաքակիրթ կյանքին ու միմյանց նկատմամբ հոգատարությամբ: Ո՛չ բանակով, ո՛չ տարածքով Ռուսաստանը չի կարողանա նվաճել Ուկրաինան,- հայտարարեց Ուկրաինայի նախագահը:

ՌԻԿՐԱԻՆԱՅԻ ԶԵՆՔԻ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ՄԱՏԱԿԱՐԱՐԸ ԲՈՒՂԱՐԻԱՆ Է

Ռազմական փորձագետների հավաստմամբ, Բուլղարիան դարձել է Ուկրաինայի զենքի եւ զինամթերքի խոշ-

որագույն մատակարարը: Փորձագետների գնահատմամբ, ներկա դրությամբ Բուլղարիայից Ուկրաինային տրվել է առնվազն 1 միլիարդ եվրոյի զենք ու զինամթերք: Հարկ է նշել, որ Բուլղարիան պաշտոնապես հերքում է Ուկրաինային զինամթերք մատակարարելու տեղեկատվությունը:

ՎԱՊԻՄԻՐ ՊՈՒՏԻՆ. «ՂԱ ԱՅՆ ԱՄԵՆԸ ԶԵ, ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱՆԵԼ»

Պատասխանելով Սեւաստոպոլի հրթիռակոծության կապակցությամբ Ռուսաստանի պատասխան գործողությունների մասին լրագրողի հարցին՝ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարեց, որ ուկրաինական ենթակառուցվածքի հրետակոծությունը մասնակիորեն պայմանավորված է հենց դրանով, թեեւ դա այն ամենը չէ, ինչ կարող են անել:

Անդրադարձավ հնարավոր բանակցությունների հարցին՝ Ռուսաստանի նախագահը նշեց, որ դրան կարելի է հասնել միայն կոնկրետ որոշումների ընդունման կամքի դրսևորման դեպքում:

- Մենք պատրաստ ենք դրա համար, թեեւ մյուս կողմից բանակցելու ցանկության պատրաստակամություն չենք նկատում,- հայտարարեց Վլադիմիր Պուտինը:

ՌՈՒՄՆԵՐԸ ՀՐԹԻՈՎԱԿՈՇԵԼ ԵՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿՈՒԹՅՆԵՐԸ

Ինչպես տեղեկացրել է Ուկրաինայի արտաքին գործերի նախարարությունը, ռուսական կողմը հրթիռակոծել է Կիեվի եւ մյուս քաղաքների էներգետիկ ու ջրամատակարարման կառույցները, ինչը հանգեցրել է երկրի նշանակալից հատվածում էլեկտրաէներգիայի եւ ջրի մատակարարման ընդհատման:

«Ռուսաստանը շահագրգռված չէ խաղաղ բանակցությունների, ինչպես նաեւ համաշխարհային պարենային անվտանգության ապահովման հարցում»,- ասված է Ուկրաինայի ԱԳՆ հայտարարության մեջ:

ՌԻԿՐԱԻՆԱՅՈՒՄ ԶՈՂՎԵԼ Է ԳՈՒՐԳԵՆ ԳԱԳՆԻՉԵՆ

Ուկրաինայում ընթացող մարտերում զոհվել է զետաափոնցի Գուրգեն Գագնիձեն՝ թվով 24-րդ վրաց զինվորը: Ուկրաինայում վրացի մարտիկների զոհվելու մասին առաջին տեղեկությունն ստացվել է մարտի 18-ին: Մինչ օրս Ուկրաինայում 24 վրացի մարտիկ է զոհվել:

Ըստ լրատվական գործակալությունների

Շաբաթից շաբաթ. Փաստեր և իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՎԱՆԳԱԿԱՆ

ՆՇՎԵՑ «ԱՐԽԱԶԵՐԵՆԻ ՕՐԸ»

Հոկտեմբերի 27-ին «Արխազերենի օրվա» կապակցությամբ իրենց շնորհավորանքներն են հղել Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին:

Վարչապետի շնորհավորական ուղեձուռն նշված է, որ արխազերենը, վրացերենի հետ միասին, պաշտպանված է Վրաստանի սահմանադրությամբ, եւ ընդհանուր լեզվական գանձարանի անբաժանելի մասն է:

Իր հերթին, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին նշել է, որ եվրահյուսակցության խորացմանը զուգահեռ՝ Վրաստանը պետք է կարողանա պահպանել ու զարգացնել արխազերենը: «Արխազերենի օրվա» կապակցու-

թյամբ Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Թեա Ախվիլեյիանին այցելեց Ազարիայի Խելվաչաուրիի մունիցիպալիտետի Փերիա գյուղ, որտեղ վրացիների հետ միասին ապրում են արխազ ներգաղթյալներ:

Հիշեցնենք, որ «Արխազերենի օրը» Վրաստանում նշվում է 2007 թվականի հոկտեմբերի 27-ից: 2011 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ն արխազերենը ներառել է վտանգված լեզուների ցանկում: Ընդգծենք, որ Վրաստանից չվերահսկվող Արխազիայում խոսում են ռուսերեն:



ՆԵՍԿՕ-ն արխազերենը ներառել է վտանգված լեզուների ցանկում: Ընդգծենք, որ Վրաստանից չվերահսկվող Արխազիայում խոսում են ռուսերեն:



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ՝ ՎՐԱՑԱԿԱՆ ԳԻՆՈՒՆ

Վրացական տարբեր տեսակի գինիներ արտադրող «Չելթի գինեգործություն» ընկերությունը Գերմանիայում հիմնել է ներմուծող ընկերություն՝ Georgian Wine Organization-ը եւ ստացել իր գինին ամբողջ Եվրոպայում վաճառելու հավաստագիր:

Ինչպես նշեցին ընկերությունում, պատվերներ են ստացվում ոչ միայն Գերմանիայից, այլև Գերմանիայից, Իտալիայից, Իսպանիայից եւ այլն:

Նշենք, որ «Չելթի գինեգործություն» ընկերությունը տարեկան արտադրում է կես միլիոն շիշ 15 տեսակի գինի:

ԼԱՐԻՈՎ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱՐԴՈՒՅՔԸ ԲԱՐՁՐԱՑԵԼ Է

Վրաստանի Ազգային բանկի տվյալներով, նախորդ ամիս վարկերի տոկոսադրույքը կազմել է 12,9 տոկոս, մինչդեռ այս տարվա օգոստոսին՝ 13,6 տոկոս:

Ազգային արժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքը սեպտեմբերին, օգոստոսի համեմատ, 16,2 տոկոսից նվազել է մինչև 16,1 տոկոս: Իրավաբանական անձանց տրամադրված վարկերի տոկոսադրույքը չի փոխվել եւ շարունակում է մնալ 13,8 տոկոս, իսկ ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տոկոսադրույքը մեկ ամսում 17,7 տոկոսից հասել է 18,1 տոկոսի:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿԱՆ ԿՈՒՐԱԸ (4 նոյեմբերի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեյալ կուրսը:

Table with 2 columns: Տարադրամ (Currency) and Լարի (Lari). Rows include 1 ԱՄՆ ԴՈԼԱՐ (2.7491), 1 ԵՎՐՈ (2.6760), 100 ՌՈՒՔԼԻ (4.4077), 1000 ԴՐԱՄ (6.9677).

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ «ԱՉՎԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԵՎ «ՀԱՎԱԿՈՒՄՆԻՆԻ ԲՅՈՒՐՈՅԻ» ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ

(Սկզբը՝ 1-ին էջում)

ղովի հանձնարարականների հիման վրա առաջին ընթերցմամբ հավանություն տվեց նաև Հակակոռուպցիոն բյուրոյի օրենսդրական փոփո-

խություններին:

Օրենքի նախագիծը լիազուստ միստում քննարկվել է առաջին ընթերցմամբ, եւ 84 պատգամավոր կողմ է արտահայտվել, մեկը՝ դեմ: Ըստ նախագծի, կստեղծ-

վի հակակոռուպցիոն բյուրո, որի հիմնական խնդիրը կլինի խթանել կոռուպցիայի դեմ պայքարը: Այդ նպատակով նշված բյուրոն կհամակարգի նաև համապատասխան մարմինների, կազմակերպու-

թյունների եւ պաշտոնատար անձանց գործունեությունը: Հակակոռուպցիոն բյուրոն հաշվետու է լինելու խորհրդարանին եւ միջգերատեսչական հակակոռուպցիոն խորհրդին:

ԱՌՈՂՋԱՊԱՐԿՈՒԹՅՈՒՆ



ԹԵՆԳԻՉ ԶԵՐՅՎԱՅԵ. «ՀՆԱՐԱՎՈՐ Է COVID-19-Ի ՆՈՐ ՀՏԱՄԻ՝ OMICRON-Ի ԱԿՏԻՎԱՑՈՒՄ»

Թբիլիսիի ինֆեկցիոն հիվանդանոցի գլխավոր տնօրեն Թենգիզ Ցերցվաձեի խոսքով, Վրաստանն աշխարհում առաջիններից է, որը գործնականում կարողանում է կառավարել COVID-19-ը՝ մնացած շնչառական վարակների պես:

Վարակաբան բնակչությանը խորհուրդ տվեց ակտիվորեն շարունակել կորոնավիրուսի դեմ պատվաստումը, ներառյալ՝ այսպես կոչված «խթանիչ» (booster) դոզայով:

Թենգիզ Ցերցվաձեի՝ խոսքով, COVID-19-ի համաճարակը դեռ շարունակվում է ինչպես աշխարհում, այնպես էլ՝ Վրաստանում:

- Վերջին շրջանում տեղեկություն է ստացվել, որ Եվրամիության երկրներում կորոնավիրուսով վարակման, հոսպիտալացման եւ մահացության դեպքերի թիվն ավելանում է, եւ Եվ-

րոպայում սպասվում է կորոնավիրուսի նոր ալիք: Առաջիկա շաբաթները, հավանական է, վարակը կարտահայտվի Omicron շտամի նոր ենթատարբերակով (հավանաբար՝ BQ.1.1): Բայց դա, իհարկե, դեռեւս ենթադրություն է. - ասաց վարակաբանն ու հավելեց, որ հոկտեմբերին Վրաստանում նկատվել է COVID-19-ի նոր դեպքերի նվազման միտում՝ օրական միջինում 500-ից հասնելով 200 նոր դեպքի:

- Ամենակարեւորն այն է, որ Վրաստանում արդեն 7-րդ ամիսն է՝ COVID-19-ից մահացությունների թիվը կայուն պահվում է նվազագույն մակարդակում, - նշեց Թենգիզ Ցերցվաձեն:

ՏԱՐԱԾԱՆԵՐՋԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՆԱԼՑԻՄԵՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՂԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Ախալցխի մունիցիպալիտետի քաղաքապետ Իրակլի Լազարաշվիլին եւ փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանը հանդիպում ունեցան Ախալցխի երիտասարդական խորհրդի անդամների հետ:

Հանդիպմանը երիտասարդները մունիցիպալիտետների ղեկավարներին ներկայացրին կատարված աշխատանքների եւ առաջիկա ծրագրերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն:

Նշվեց, որ Ախալցխի երիտասարդական խորհուրդը ներկա դրությամբ իրականացնում է երկարաժամկետ մի շարք ծրագրեր: Մասնավորապես, քաղաքապետարանի համապատասխան ծառայությունների հետ միասին, իրականացնում են



համատեղ նախագծեր: Ախալցխի քաղաքապետ Իրակլի Լազարաշվիլին եւ փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանը հանդիպման մասնակիցներին պատմեցին մունիցիպալիտետում իրականացվող ենթակառուցային նախագծերի, երիտասարդական խորհրդի հետ միասին ծրագրած աշխատանք-

ՃԱՄՄԱՏԻ ԵՎ ՆԱՐԴՈՒ ՄՐՅԱՆԱՐԵՐ՝ ԱՆԱԼՔԱԼՔԻ ՄՈՒՆԻՅԻՊԱԼԻՏԵՏԻ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅԱՄԸ



Ախալքալաքի քաղաքապետարանի նախաձեռնությամբ արջակցութային անցկացվել է շախմատի, նարդու եւ սեղանի թենիսի կանանց մրցաշարեր:

Մրցաշարերին մասնակցում էին Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետարանի եւ քաղաքապետարանի կողմից ստեղծված ծառայությունների աշխատակիցները:

Կանանց թեմիսում առաջին տեղն ու մրցանակը նվաճեց Ախալքալաքի թիվ 1 նախակրթարանի վարիչ Լեյլա Գալուստյանը:

Շախմատում 1-ին տեղը զբաղեցրեց քաղաքապետարանի իրավաբանական ծառայության աշխատակից Լուսյա Չոբանյանը:

Նարդու լավագույն խաղում 1-ին տեղը զբաղեցրեց երաժշտական դպրոցի աշխատակից Արուսյակ Այվազյանը: Նշենք, որ մրցանակների աշխատակիցները ու մյուս մասնակիցները Ախալքալաքի քաղաքապետ Մելքոն Մակարյանի, քաղաքապետի երկրորդ տեղակալ Մկրտիչ Մղղեսյանի ու քաղաքապետարանի այլ ղեկավարների կողմից արժանացել են պատվոգրերի, մեդալների եւ տարբեր մրցանակների:

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂ՝ ՆԻՆՈՍԻՆԴԱՅԻ ՄՈՒՆԻՅԻՊԱԼԻՏԵՏԻ ԳՊՐՈՅՆԵՐԻ ՄԻՋԵՎ



Նինոծմինդայի մունիցիպալիտետի դպրոցների միջև անցկացվեց «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղի եզրափակիչ փուլը:

Եզրափակիչ փուլում Գոնդուրայի թիմը, երկրորդը՝ Ժղանովականի, երրորդ տեղում՝ քաղաք Նինոծմինդայի թիվ 3 դպրոցի թիմն էր: Հաղթողները պարգևատրվեցին պատվոգրերով:

Խաղը կազմակերպել էր Նինոծմինդայի քաղաքապետարանի մշակույթի, կրթության, սպորտի, հուշարձանների պահպանության, երիտասարդական հարցերի եւ զբոսաշրջության զարգացման ծառայությունը, որին ներկա էին քաղաքապետարանի ու ավագանու աշխատակիցները:

միմյանց հանդիպեցին մունիցիպալիտետի 3 ուժեղագույն՝ Նինոծմինդայի թիվ 3 դպրոցի, Ժղանովականի եւ Մեծ Գոնդուրայի դպրոցների թիմերը: Առաջին պատվավոր հորիզոնականը զբաղեցրեց Մեծ

էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ԳԻՆԸ ՆՎԱԶԵԼ Է, ԾՐԱԳՐՎՈՒՄ Է ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ, ԶԱՑԻ ԳՆԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԿԱՆԽՈՒՄ...

Ներկայիս գլոբալ տնտեսական ճգնաժամի պայմաններում Վրաստանի կառավարությունը հնարավորինս անում է բնակչության կենսամակարդակի պահպանման, սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացման կանխման, սոցիալական և առողջապահության ոլորտի սպասարկումների մատչելիության ապահովման ուղղությամբ: Ստորև ներկայացնում ենք այն հիմնական նորությունները, որոնք հետաքրքրում են բնակչությանը՝ ունենալով կենսական և կարևոր նշանակություն:

ՕՐԱՐ ԸՍՏՈՒԳԻԱ. «ԱՌԱՋՆԱՐԵՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԶԱՑԻ ԳՆԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԿԱՆԽՈՒՄՆ Է»



Ինչպես հայտարարեց Վրաստանի բնապահպանության և գյուղատնտեսության նախարար Օթար Շամուգիան, այսօր առաջնային խնդիր է թույլ չտալ հացի գնի էական բարձրացում:

Նախարարը նշեց, որ հոկտեմբերին ավելի քան 25 հազար տոննա ցորեն է ներմուծվել, և ավարտագները վերսկսել են իրենց աշխատանքը: - Զամաշխարհային շուկայում ցորենի գինը տատանվում է, գարնանից ամառ ընկած ժամանակահատվածում աճի դինամիկա է գրանցվել: Ամեն ինչ արել ենք հացի գինը պահպանելու համար, արդյունքում, հացի որոշ տեսակների գինը նվազել է 10 թերթիով: Այժմ ակամատես ենք նոր իրողության: Զուսանք՝ հնարավոր կլինի ցորեն ներմուծել Ուկրաինայից: Մենք վերահսկում ենք գործընթացը և, եթե ուղրտին օգնելու համար կառավարության միջամտության անհրաժեշտություն չլինի, կանենք: - նշեց Օթար Շամուգիան և հավելեց, որ նախարարությունը հետևում է իրադարձությունների զարգացմանը, հաշվարկում է, թե ինչքան ցորեն հնարավոր կլինի ներմուծել, հետևաբար, ոլորտի ներկայացուցիչների հետ միասին կկայացվի այնպիսի որոշում, որն ընդունելի կլինի քաղաքացիների համար:

ՊԱՎԻԹ ՆԱՐՄԱՆԻԱ. «ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱԿԱԳՆԻ ԲԱՉՐԱՆՑՈՒՄ ԶԵՆՔ ԱԿՆԿԱԼՈՒՄ»

Վրաստանի էներգետիկայի և ջրամատակարարման ազգային կարգավորող հանձնաժողովի նախագահ Պավիթ Նարմանիան, անդադարադադար կոմունալ սակագների հնարավոր ավելացման հարցին, հայտարարեց, որ դեկտեմբերին կարգավորող հանձնաժողովը պետք է որոշի նոր սակագներ, սակայն այս տեսանկյունից բնական գազի սակագնի բարձրացում չենք ակնկալում:



- Երբ ինչ-որ սակագնի մասին տեղեկություն են լսում, անպայման պետք է կարգավորող հանձնաժողովից ճշտես, քանի որ մենք սակագները սահմանող գերատեսչություն ենք, և վավազույնս գիտենք, թե երբ և ինչ է սպասվում: Քանի որ եռամյա սակագնային ժամկետն ավարտվում է այս տարվա դեկտեմբերին, կարգավորող հանձնաժողովը պետք է նոր սակագներ սահմանի, թեև այս տեսանկյունից բնական գազի սակագնի որևէ բարձրացում չենք ակնկալում: - ասաց Պավիթ Նարմանիան:

ԳՐԱՆՑՎԵԼ Է ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

Ընթացիկ տարվա օգոստոս-սեպտեմբեր ամիսներին վրացական շուկայում բոլոր տեսակի վառելիքի գները զգալի նվազել են:

Նվազումը տատանվում է 10-50 թերթի միջև: Նվազման հիմնական գործոնները միջազգային շուկայում գների անկումն ու ազգային արժույթի ամրապնդումն են:

Նշենք, որ Վրաստանի մրցակցային գործակալության տվյալներով, օգոստոսին, վարչապետի հանձնարարականից հետո, վառելիքի սակագնի հետ կապված շուկայում տիրող իրավիճակը պարզելու համար, գործակալությունը սկսել էր ուսումնասիրություն, որից հետո վառելիքի գինը նվազեց:

Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2022 թվականի սեպտեմբերին, օգոստոս ամսվա համեմատ, Վրաստանում գնաճը կազմել է 0,8, իսկ տարեկան գնաճը՝ 11,5 տոկոս:

Այս տարվա սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, էժանացել են բազուկը (15,1 տոկոս), կանաչեղենը (14,7 տոկոս), սմբուկը (12,7 տոկոս), կիտրոնը (10,5 տոկոս), կաղամբը (9,8 տոկոս), գազարը (9,3 տոկոս), կարտոֆիլը (8,6 տոկոս), կիվին (8,1 տոկոս), խաղողը (3,9 տոկոս):

ՄԻԱՅՆԱԿ ԾՆՈՂԻ 3000 ԼԱՐԻԻ ԵՎԱՍՈՒՏԸ ԶԻ ԶԱՐԿՎԻ

Օրինագծի համաձայն, ընդլայնվում է միայնակ մոր և միայնակ հոր կարգավիճակը որոշող պայմանների ցանկը: Քաղաքացիական օրենսգրքում ներառված են համապատասխան փոփոխություններ, որոնք վերաբերում են Սահմանադրական դատարանի որոշման կատարմանը:

Օրինագիծը սահմանում է, որ միայնակ մայրը/միայնակ հայրը համարվում է այն անձը, ում երեխան մինչև 18 տարեկան է, եթե երեխայի ծննդյան վկայականի գրառումը չի ներառում երեխայի մյուս ծնողի գրառումը: Բացի այդ, միայնակ է համարվում նաև այն անձը, ով որդեգրել է մինչև 18 տարեկան երեխա, եթե երեխայի ծննդյան վկայականի գրառումը չի ներառում երեխայի երկրորդ ծնողի մասին գրառում: Եթե անչափահաս երեխայի երկրորդ ծնողը մահացած է, մահացած կամ անհայտ կորած է ճանաչվել: Կամ՝ եթե անչափահաս երեխայի երկրորդ ծնողը զրկվել է ծնողական բոլոր իրավունքներից ու պարտականություններից:

Բացի վերը նշվածից, փոփոխությունները վերաբերում են նաև միայնակ մոր և միայնակ հոր նպաստների: Մասնավորապես, գործող օրենքով, օրացուցային տարվա ընթացքում միայնակ մոր ստացած հարկվող եկամուտը մինչև 3000 լարի չի հարկվում: Փոփո-

խությունների համաձայն, այս հարկային արտոնությունը կտարածվի ոչ միայն միայնակ մայրերի, այլև միայնակ հայրերի վրա:

ԱՎԵԼԱՑԱԾ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ՝ 800 ԶԱԶԱՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ

2023 թվականին Վրաստանի 800 հազար թռչակառու կստանան բարձրացված կենսաթոշակ: Մինչև 70 տարեկան թռչակառուների կենսաթոշակը կբարձրանա 35 լարիով և կդառնա 295 լարի, իսկ 70 և բարձր տարիքի կենսաթոշակառուներին՝ 65 լարիով և կդառնա 365 լարի:

2023 թվականի պետական բյուջեով կենսաթոշակների համար կտրամադրվի 494 մլն լարի (ընդհանուր բյուջեի 16 տոկոսը), ինչը ռեկորդային ցուցանիշ է:

Բացի ծերության կենսաթոշակից, 188 միլիոնով կավելանան նաև սոցիալական աջակցության ուղղությամբ բյուջեն: Այս աճը պայմանավորված է 2022 թվականի հուլիսի 1-ից սոցիալապես անապահով երեխաներին տրամադրվող նպաստի 100-ից 150 լարի բարձրացմամբ և վերջին մեկ տարում կենսապահովման նպաստ ստացողների թվի ավելացմամբ:

ՔՐՈՆԻԿ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԱՎԵԼԱՆՈՒՄ Է



Վրաստանի բռնազավթված տարածքներից հարկադիր վերաբնակների, աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարար Ջուրաբ Ազարաշվիլու հայտարարությամբ, 2023 թվականից քրոնիկ հիվանդությունների բուժման համար նախատեսված դեղամիջոցների ֆինանսավորումը կկրկնապատկվի և կկազմի մոտավորապես 50 մլն լարի:

- Վերադառնալու մոտ 24 մլն լարիով ֆինանսավորվում են քրոնիկ հիվանդությունների բուժման դեղերը, որոնք մեր քաղաքացիներն անվճար ստանում են դեղատներում: 2023 թվականի հունվարից այս դեղերի համար նույնպես կսահմանվեն տեղեկանքային գներ, այսինքն՝ ինքնարժեքի վերին շեմ: Ըստ այդմ, ֆինանսավորվող 24 միլիոնով մենք շատ ավելի դեղեր ենք տրամադրելու: Բացի այդ, հաջորդ տարի քրոնիկ հիվանդությունների համար նախատեսված դեղամիջոցների բյուջեն կկրկնապատկվի և կհասնի 50 մլն լարի: Սա նշանակում է, որ քաղաքացիներին հասանելի կդառնան ավելի շատ բրենդային դեղամիջոցներ, ինչն, իր հերթին, կբարձրացնի ցուցանիշը: - նշեց Ջուրաբ Ազարաշվիլին:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՄՊԱՌՈՂՆԵՐԻ

ՆԵՐԴՐՎՈՒՄ Է ԳՆՎԱԾ ԱՊՐԱՆՔԻ 14-ՕՐՅԱ ԱՆՎԵՐԱՊԱՅ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԿԱՆՈՆԸ

ԹԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԴԵՂՔՈՒՄ, ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ԻՐԱՎԱՍՈՒ ԵՎ ՎԵՐԱԳԱՐՉՆԵԼ ԳՆՎԱԾ ԱՊՐԱՆՔԸ

Նոյեմբերի 1-ից Վրաստանի տարածքում սպառողների իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու, խախտումների կանխման ու խախտված իրավունքների վերականգնմանը նպաստելու, փաստերի բացահայտման և պատշաճ արձագանքման նպատակով, Վրաստանի Ազգային մրցակցության գործակալությունը սկսում է հայտերի ընդունում ու վերանայում:

Ազգային մրցակցության գործակալության նախագահ Իրակլի Լեկվինաձեի խոսքով, «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի նպատակը երկրում սպառողների պաշտպանության բարձր մակարդակի ապահովումն է, որը Վրաստանի և Եվրամիության միջև ստորագրված Ասոցացման համաձայնագրի պարտավորության մաս է կազմում:

- 2022 թվականի նոյեմբերի 1-ից, ցանկացած անձ իրավունք ունի դիմել գործակալություն: Մեր գործակալությունը կիրականացնի դեպքի ուսումնասիրություն ենթադրյալ խախտման փաստերի վերաբերյալ, որն առաջացրել կամ կարող է առաջացնել սպառողների խնդիր շահերի խախտում:

Կարևոր է պարզաբանել, որ եթե ապրանքը ամենուրեք հետո վեց ամսվա ընթացքում սպառողը հայտնաբերում է թերություն, բեռը դրվում է վաճառողի վրա,

իսկ եթե թերությունը հայտնաբերվում է վեց ամիս հետո, ապա ապացուցման պարտավորությունը կրում է սպառողը:

Նոր օրենքով ներդրվում է 14-օրյա անվերապահ վերադարձի քաղաքականություն, որը վերաբերում է միայն առցանց առևտրին և ուղրտից դուրս կնքված պայմանագրերին:

Ինչ վերաբերում է ընթացակարգային մասին, խախտման փաստը հաստատելու դեպքում, գործակալությունը վաճառողին ողջամիտ ժամկետ է սահմանում խախտումը վերացնելու համար, իսկ չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, վաճառողը տուգանվում է:

Օրենքով սահմանված կարգով վաճառողը պարտավոր է պատվիրատուին տրամադրել ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն ապրանքի տեսակի, բնութագրերի, պիտանիության և այլնի մասին: Նաև տրամադրում է հստակ, հաս-

կանալի ցուցում վաճառված ապրանքների կամ ծառայությունների ու միավորի գնի վերաբերյալ: Մեր հիմնական նպատակն է, որ օգտագործողի իրավունքները պաշտպանված և երաշխավորված լինեն, մյուս կողմից՝ կարգավորվեն վաճառողի բոլոր պարտավորությունները՝ հնարավորինս կանխելու խախտումները: - ասել է Իրակլի Լեկվինաձե և հավելել, որ նոյեմբերի 16-17-ը Վրաստանում, բոլոր հինգ կարգավորիչների հովանու ներքո, նախատեսվում է մրցակցություն և սպառողների իրավունքների մաքուր միջազգային համաժողով: Միջոցառման շրջանակներում, կընթանան մրցակցային իրավունքներ, սպառողների իրավունքների պաշտպանության մեխանիզմներն ու կարգավորող մարմինների կողմից իրականացվող գործունեությունը:

Օրենքն ուժի մեջ է մտել հունիսի 1-ից: Նշված ժամանակահատվածում ստեղծվել է համալրվել է համապատասխան բաժին: Կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն/վերլուծություն, աշխատակիցները վերապատրաստվել են: Ստորագրվել է գործողությունների ծրագիր: Մշակվել է «Սպառողների իրա-

վունքների մասին» Վրաստանի օրենքի հիման վրա պարտատված ենթաօրենսդրական ակտ, որի շրջանակներում, գործակալության ներկայացուցիչները հանդիպել են Վրաստանում գործող շուրջ 20 քիզնես ասոցիացիաների, քաղաքացիական սեկտորի, միջազգային գործընկեր գործակալությունների, էլեկտրոնային - առևտրային ասոցիացիայի գործընկեր քիզնես ընկերություններ և ոլորտի փորձագետներ: Օրենքին ծանոթանալու համար ակտիվ երկխոսության շեժին է իրականացվում տարբեր թիրախային լսարանների հետ: Գործարկվել է թեժ գիծ՝ (032) 2 05 4422; 598 05 4422, որտեղ ցանկացած հետաքրքրված անձ կարող է զանգահարել ու ստանալ կարելու և հետաքրքիր տեղեկատվություն: Եվրամիության ֆինանսավորմամբ, գործակալությունում սպառողական քաղաքականության պաշտպանության ուղղությամբ, մեկնարկվել է «Վրաստանի մրցակցության գործակալության կարողությունների հզորացում» TWINNING նախագիծը, որի տեղությունը որոշվել է երկու տարի ժամկետով: